



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 26 ՅՈՒՆԻՈՒՆ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմասպութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամե-նայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից, մարդասիրութեամբլո՛ւ քո խրնայեա յանձինըս մեր. ստեղծիչ կենդանեաց եւ Հանգուցիչ նրնջեցելոց:

ԱՂՈԹՔ

Տէ՛ր Աստուած մեր, կը փառաբանենք Բո՛ւ Սուրբ անունդ, որովհե-տեւ Դուն ես ճշմարիտ թագաւորը, եւ Բո՛ւ արդարութիւնդ ու սրբութիւնդ երկիրը կը լեցնեն յոյսով ու ճշմարտութեամբ: Բո՛ւ յոյսովդ փա-րապել մեր սրտերուն խաւարը, եւ Բո՛ւ արդար դարաստանիդ առջեւ հալին մեր վախերն ու կասկածները: Սորվեցուր մեզ սիրել այն, ինչ որ բարի է, եւ ապել այն, ինչ որ չար է: Ազապել, Տէ՛ր, մեզ ամէն անիրաւութենէ, եւ լեցուր մեր հոգիները ուրախութեամբ ու խաղաղութեամբ: Թող մեր կեանքը ըլլայ Բո՛ւ փառքիդ վկայութիւնը, եւ մեր շրթները՝ Բո՛ւ գովաբանութեան ձայնը, որպէսզի միշտ Բեզմով ուրախանանք, ար-դարներուն հետ միասին: Փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէ՛ր աղաչեա-ցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածամայն, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէ՛ր Աստ-ուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնէ ես նեղելոց:

Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Տէրը կը թագաւորէ, ցնծա, աշխարհ,
ուրախացէ՛ք, դուք՝ կղզիներ:
Թանձր ամպով պարուրուած է Ան,
բայց իր իշխանութիւնը հաստատուած է
արդարութեան եւ իրաւունքի վրայ:
Իր առջեւէն իր կրակն է որ կ'երթայ,
եւ կ'այրէ իր շուրջ գտնուող հակառակորդները:
Իր փայլակները աշխարհը կը լուսաւորեն,
իսկ երկիրը կը տեսնէ ու կը սարսի:
Լեռները մոմի նման կը հալին Տիրոջ դիմաց,
որ Տէրն է ամբողջ աշխարհին:
Երկինքը անոր արդարութիւնը կը պատմէ,
եւ բոլոր ժողովուրդները անոր փառքը կը տեսնեն:
Ամօթով պիտի մնան անոնք՝ որ կուտն կը պաշտեն,
ոչնչութիւն եղող կուտներով կը պարծենան.
որովհետեւ այդ աստուածներն ալ
երկրպագելով Տէրը կը պաշտեն:
Սիւնը լսեց եւ ուրախացաւ,
եւ Յուդայի ֆաղաֆները ցնծացին,
տեսնելով Քու դատաստաններդ, ով Տէր:
Որովհետեւ Դու, ով Տէր,
գերագոյն Տէրն ես համայն աշխարհին,
անչափօրէն բարձր՝ բոլոր աստուածներէն:
Դուք՝ ով Տէրը սիրողներ, ատեցէ՛ք չարութիւնը,
Տէրը կը պահէ անոնք՝ որոնք իրեն հաւատարիմ են,
զանոնք կ'ազատէ ամբարիշտներու ձեռքէն.
լոյս կը ծագեցնէ արդարներուն վրայ,
ուրախութիւն կու տայ անոնց՝ որոնք սրտով ուղիղ են:
Ուրախ եղէ՛ք Տիրոջմով, ով արդարներ,
եւ գոհութիւն յայտնեցէ՛ք յիշելով անոր սրբութիւնը:

ՑՆՃԱ ԱՇԽԱՐՀ, ՏԵՐՐ ԿԸ ԹԱԳԱԲՈՐԷ

Նախորդ Սաղմոսները 93, 94, 95 եւ 96 թագաւորական Սաղմոսներ էին, ուր կը ներկայացնէին Ասոր-ուած որպէս Թագաւոր, որպէս Դաբաւոր, Ասորուծոյ ժողովուրդին կոչ՝ որպէսզի ցնծութեամբ երգեն Տի-րոջ, թէ ինչեր ըրաւ իրենց համար, բայց զգուշացուց նաեւ թէ չըլլայ իրենց հայրերուն նման յիմառութիւն ընեն Տէրը փորձելով, իսկ 96-րդ Սաղմոսը կոչ ամբողջ աշխարհին նոր երգ երգելու Տիեզերքի արարիչ թագաւորին: Ահա որպէս շարունակութիւն, 97-րդ Սաղմոսը դարձեալ կոչ աշխարհին ցնծալու, որովհետեւ րէրը կը թագաւորէ: Հետաքրքրական է, ներկայ եղանակով կը սկսի Սաղմոսը, ոչ անցեալ եւ ոչ ալ ապառնի: Այսինքն՝ ոչ թագաւորած, բայց հիմա չէ այլեւս, եւ կամ պիտի թագաւորէ: Ընդհակառակը ներկայ եղանակով, կը թագաւորէ: Սա ցոյց կու տայ երկու բան: Առաջին, ովքեր ալ ըլլան երկրի թագաւորները, իշխողները, խորքին մէջ Տէրը Ինքն է Թագաւորը: Երկրորդ, եթէ քակաւին չենք տեսներ այդ ճշմարտութիւնը, ապա այս Սաղմոսը կու գայ ներկայացնելու թէ արդէն աւարտին Տիրոջ թագաւորութիւնն է որ պիտի թագաւորէ, բայց արդէն ներկայ եղանակով: Օրինակ, երբ Քրիստոս Իր խօսքը ուղղելով աշակերտներուն ըսաւ. “Մի վախնաք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին”: Ոչ թէ պիտի յաղթեմ, այլ արդէն յաղթեցի: Ակնարկելով Իր յարութեան:

Առաջին համարը կը ներկայացնէ, թէ Ասորուծոյ թագաւորութիւնը ցնծութիւն եւ ուրախութիւն կը պարճառէ համայն աշխարհին: Ժողովուրդներ երբ կ'ունենան իրենց թագաւորը կամ իշխողը, եւ, սակայն, կ'ապրին բռնապիրութեան փակ, եւ յանկարծ երբ նոր իշխող մը կը յայտնուի որոշ ուրախութիւն մը կ'ապ-րին, որովհետեւ նորը զիրենք պիտի դուրս բերէ այդ վիճակէն: Բայց պարմութիւնը վկայ, որ այդ ուրախութիւնը շար երկար չի տներ, որովհետեւ անոնց իշխանութիւնը արդարութեան եւ իրաւունքի վրայ հաս-տատուած չէ: Ահա թէ ինչու Ասորուծոյ թագաւորութիւնը ուրախութիւն եւ ցնծութիւն կը բերէ, որովհետեւ արդարութեան եւ իրաւունքի վրայ հաստատուած է:

2-6 համարներ: Երկրորդ համարը հետաքրքրական բան մը կը ներկայացնէ Ասորուծոյ մասին. “Թանձր ամբով պարտուած”: Արքայայտութիւն մը, որ ցոյց կու տայ Ասորուծոյ անհասանելիութիւնը եւ անըմբռ-նելիութիւնը, մարդու հասողութենէն վեր, սակայն Իր իշխանութիւնը արդարութեան եւ իրաւունքի հաս-տատուած: Ահա այդ արդարութեան եւ իրաւունքի որպէս արքայայտութիւնը Իր Դաբաստանն է, որ կը ներկայացուի կրակի պարկերով, ուր Անոր ներկայութեան հակառակորդները կ'այրին: Ով կրնայ Ասորուծոյ ներկայութեան դիմանալ, երբ Ան որպէս կրակ կը ներկայանայ, ով կը դիմանայ կրակին դիմաց: Կրակ մը որ հակառակորդները կ'այրէ ու կ'ոչնչացնէ, իսկ Անոր հաւատարիմները՝ կը մաքրէ ու կը լուսաւորէ: Կրակի յարկութիւնն է: Մէկ կողմէ Իր ներկայութիւնը աշխարհը կը լուսաւորէ, միւս կողմէ՝ երկիրը կը դողայ: Որ-քան բնութեան փարբերը կը ներկայացուին, նոյնքան կարելի է անոնց մէջ տեսնել մարդկութիւնը: Ասորու-ծաշունչին յարուկ բառերու օգտագործումը՝ լեռներ, կղզիներ, գետեր: Տակաւին, այն ինչ որ մարդու հա-մար հզօր, անդրդուելի, սակայն Ասորուծոյ ներկայութեամբ մոմի պէս հալող, անզօր: Ահա անգամ մը եւս նոյն արքայայտութիւնը, երկինքը անոր արդարութիւնը կը պարմէ, եւ բոլոր ժողովուրդները անոր փառքը կը տեսնեն, իսկ անոնք որոնք քակաւին չեն տեսներ, պիտի գայ ժամանակը եւ պիտի տեսնեն:

7-9 համարներ: Անոր համար ալ եօթներորդ համարը կու գայ ըսելու, “Ամօթով պիտի մնան անոնք՝ որ կուռք կը պաշտեն, եւ անով կը պարծենան”, որովհետեւ Տէրը Ինքն է միայն ճշմարիտ Ասորուծը, իսկ խորքին մէջ միւս աստուածները իրենք ալ Տիրոջ կ'երկրպագեն: Ահա Ասորուծոյ ժողովուրդը, որ այսօրեւ կը ներկայացուի Սիոն բառով, որ լեռան անունն է, որ սակայն Ասորուծոյ լեռը կը ճանչցուի, լսելով կ'ուրախա-նայ, եւ Յուդայի քաղաքները կը ցնծան, որովհետեւ Ասորուծոյ դարաստարանները արդար են: Եւ Ինքն է գե-րագոյն Տէրը եւ բարձր բոլոր աստուածներէն:

10-12 համարներ: Վերջին բաժնով կոչ, յիշեցում եւ խոստում: Կոչ, ովքեր որ Տէրը կը սիրեն արեն չա-րութիւնը: Տէրը սիրել կը նշանակէ չարը արել, հեռու մնալ չարէն: Յիշեցում եւ խոստում, Տէրը կը պահէ Իրեն հաւատարիմները եւ կը փրկէ զանոնք անիրաւութենէն: Իր լոյսը կը ծագեցնէ արդարներուն վրայ եւ ուրախութիւն եւ յոյս՝ անոնց՝ որոնք սրտով, այսինքն՝ մտածումով, խորհուրդներով ուղիղ են, այսինքն՝ ծռմռած չեն: Եւ Սաղմոսը կ'աւարտէ անգամ մը եւս յիշեցնելով, ուրախ եղէք Տիրոջմով, ով արդարներ: Նոյն արքայայտութիւնը Պօղոս Առաքեալ ունի ըսելով. “Ուրախ եղէք, դարձեալ կ'ըսեն, ուրախ եղէք, ուրախ եղէք Քրիստոսով”: Եւ գոհութիւն յայտնեցէք Ասորուծոյ սրբութիւնը յիշելով, եւ կամ Անոր սուրբ անունին: